

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ 500-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՉ



Ուրբան

Ուրբան ճաւրկամէջորէք շաբթի տանին զհրամարնի դուռնէ կէտէցոյն: Ընտանգ զարցի նաղմուն մի չնէր զոր ծէն: Ընապայանտ նտասու էր կուտրո դորմէայ. կասեզաղաւ ճս:



արդամբաութեզ ճայրտամերոյ յի քիտր զաւրուն ճէանց որը զգազանակապեցեր: Եզդիւնցի կանտուն ճիւնդատ ապարտեցեր: Մեծէտր տր կանպատուն տասցէ յոցաբէզ Ըզկալգաղաջանածոյից բոց. Եզտալախայից. ԵՍոտտպանի

1512 թվականին սկզբնավորված Հայկական տպագրության 500-ամյակը առաջիկա տարիներին, անկասկած, դառնալու է մեր ազգային-մշակութային կյանքի ամենանշանակալի իրադարձությունը՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում: Քրիստոնեության ընդունումից և Սբ. Մեսրոպի կողմից հայոց այբուբենի արարումից հետո տպագրությունը եղել է Հայոց ազգային ինքնության հաջորդ կարևոր հիմնաքարը, որը նոր ժամանակներում ապահովել է ազգի հոգեմտավոր և ապա՝ քաղաքական վերածնունդը:

Որպեսզի խորությամբ ընկալենք Հայկական տպագրության 500-ամյակի մեծ խորհուրդը, փորձենք մի ընդհանուր հայացք ձգել նրա սկզբնավորման ու տարածման շուրջ կեսհազարամյա պատմության վրա:

թիվ 2(27) հուլիս-սեպտեմբեր 2009

ՎԱՄ համահայկական հանդես

Ամենևին էլ պատահականություն չէ այն փաստը, որ 11-րդ դարում Չինաստանում ստեղծված շարժական տառերով տպագրության արվեստը՝ մարդկային իմացության այդ կարևոր ձեռքբերումը Եվրոպա հասցրած ճանապարհորդների շարքում միջնադարյան սկզբնաղբյուրներն ու հետագայի գիտական ուսումնասիրությունները հիշատակել են նաև հայ մարդու անունը: Դրանցից տեղեկանում ենք, որ դեռևս 13-րդ դարում՝ մոնղոլ-թաթարների կողմից Չինաստանի նվաճման շրջանում, այդ երկիր ժամանած հայր Օդերիկը, Անսոն Հայն ու Մարկո Պոլոս Վենետիկցին են իրենց հետ Եվրոպա բերել այս կարևոր արվեստը կամ գիտելիքը¹:

Միանգամայն օրինաչափ է, որ Արևելքի ու Արևմուտքի միջև գիտելիքների ու փորձի փոխանակման գործում մարդկությանը անգնահատելի ծառայություններ մատուցած հայ ժողովրդի զավակները իրենց ներդրումն են ունեցել նաև այս ասպարեզում: Թերևս դա էր պատճառներից մեկը, որ Չինաստանում ստեղծված, բայց հետագայում մոռացության մատնված շարժական տառերով տպագրության մասին գիտելիքները, որոնք հիմք դարձան 1455 թվականին գերմանացի Յոհան Գուտենբերգի հայտնագործության համար, կարճ ժամանակում յուրացվեցին նաև հայերի կողմից:

Արդեն 1486 թվականին Յ. Գուտենբերգի հայրենի Մայնց քաղաքում լույս տեսած **Գեհադդ ֆոն Բայդենբախի** «Ճանապարհորդություն դեպի Սուրբ երկիր» պայմանական վերնագիրը կրող գրքի 153-րդ էջում առաջին անգամ իրականացվել է հայկական տառերի փայտափորագիր տպագրությունը:

Իսկ այն փաստը, որ դրանից ընդամենը 36 տարի անց՝ 1512 թվականին, Վենետիկում տեղի է ունեցել առաջին հայ գրքի տպագրությունը, հայ մարդու՝ **Հակոբ Մեղադարսի** կողմից, է՛լ ավելի մեծ խորհուրդ է պարունակում իր մեջ: Թեև արդեն բավական երկար ժամանակ էր անցել Արևելքի ու Արևմուտքի մեծ քաղաքակրթությունների միջև կամրջի դեր խաղացող Կիլիկիայի հայկական բազավորության և անգամ՝ նույն գործառույթի կրողը հանդիսացող հզոր Բյուզանդիայի կործանումից, սակայն միջնադարյան առևտրի հզոր հենակետի վերածված Վենետիկը 16-17-րդ դարերում շարունակում էր սերտ կապեր պահպանել Միջերկրական ծովի արևելյան ափամերձ շրջանի՝ Լևանտի երկրների ու ժողովուրդների հետ: Ուստի, Հայկական Կիլիկիայից սերող հայ զինվորականները մարտնչում էին օսմանցիների դեմ Վենետիկի նավատորմի կազմում, իսկ առևտրականները շարունակում էին Արևելքի ու Արևմուտքի միջև ապրանքների ու գիտելիքների փոխանակման իրենց առաքելությունը:

Նրանցից մեկն էր Կիլիկիայից սերող հայ առևտրական Հակոբը, որը տեղափոխվելով Վենետիկ, հիմք դրեց հայկական տպագրությանը: Ու թեև նա իրեն Մեղապարտ էր անվանում 1512 թվականին տպագրված «**Ուրբաքագրի**» մեջ, բայց իրականում Երանելի էր Հակոբը, քանզի այդ գրքի բնագրի վերջում՝ խաչածև, լատինական **D. I. Z. A.** տառերով նա ողջ աշխարհին ավետում էր, որ ինքը՝ **Dei servus-Iakobos-Zanni-Armenus-**ն է, այսինքն՝ **Ասծո ծառա-Հակոբ-Ծանիյան** (իմաստային թարգմանությամբ՝ Հովհաննիսյան) **Հայ-ը**²:

¹ Ավելի մանրամասն տես Իշխանյան Ռ. Ա., Յայ գիրքը. 1512-1920, Եր., ՀԱՍՏ ԳԱ հրատ., 1981, էջ 18-19: Միջնադարում «արվեստ» հասկացությունը օգտագործվում էր ավելի լայն իմաստով:

² Գոյություն ունեն նաև **D.I.Z.A.** նշանի այլ բացատրություններ, որոնք կապվում են իտալացի տպագրիչների՝ Դեմոկրիտո Տերրաչինայի և այլոց անվան հետ:

Այսպիսով, կիլիկեցի Հակոբ Հովհաննիսյանը, չհաշտվելով միջնադարի վերջին Հայոց թագավորության կործանման փաստի հետ, ստեղծեց Հայաստանի ու հայության հոգեմտավոր վերածննդի հզորագույն կոմպաններից մեկը: Այս խիզախ քայլը առաջինն էր իրենց իսկ հայտնագործության մասին վաղուց արդեն մոռացած՝ Արևելքի ժողովուրդների շրջանում և առաջիններից մեկը տպագրության գյուտից օգտվող Արևմուտքի խիստ սակավաթիվ ազգերի մեջ:

Իրավացի էր հայ գրքի ու տպագրության մեծ երախտավոր Թեոդիկը 1912 թվականին կատարած իր այն եզրակացության մեջ, որ հայ ազգը, հիրավի, բախտավոր է եղել գրատպության ասպարեզում, քանզի Յ. Գուտենբերգի «...Մեծ Գիտին գործադրութեան դրուելէն հազիւ 60 տարի վերջ կրցաւ ունենալ իր *սոյնած գիրքը*, նոյն իսկ Հոլանտացիէն, Ռուսէն, Ամերիկացիէն, Թուրքէն, Նօրվէկիացիէն ու կարգ մը ազգերէ՛լ ալ առաջ...»³:

Չի կարելի չհամաձայնել նաև ականավոր պատմաբան Լեոյի այն դիտարկման հետ, որ 1512-ին սկսված հայ տպագրության արդյունքում «Արևելքի հին բազմաչարչար ազգը իր յատուկ ինքնուրոյն գրքերով այսպիսով զալիս է, տպագրութեան պատմութեան այս վաղ առաւօտեան, բազմելու գերմանացու, ֆրանսիացու, իտալացու, անգլիացու և այլ եւրոպացիների կողքին: Սա հրաշքի պէս մի բան էր»⁴:

Հակոբ Մեղապարտի առաքելությունը շարունակեցին և արդեն 16-17-րդ դարերում գաղութահայ իրականության մեջ տպագրական գործի տարածման ռահվիրաները դարձան Արգար Դոյր Թոխաբեցին, Հովհաննես Տերգնցին, Հովհաննես Քարմասանեցը, Խաչատուր Կեսարացին, Հովհաննես Անկյուրացին, Ռսկան Երևանցին և ուրիշներ:

Հայկական տպագրությունը հնարավորություն տվեց հայ ընթերցողների համեմատաբար լայն շրջանակներին ծանոթանալ միջնադարի հայ պատմիչների ձեռագիր մատյանների տպագիր օրինակներին և Եվրոպայում հրատարակվող գիտական գրականության վերջին նորույթներին: Այս առումով, անգնահատելի է մանավանդ Մխիթարյան հայրերի ներդրումը, որոնց կողմից թարգմանվեցին ու տպագրվեցին ժամանակի գիտության գրեթե բոլոր բնագավառների՝ ֆեռականությանը, բառարանագիտությանը, դասնագիտությանը, փիլիսոփայությանը, սրամաբանությանը, կենդանաբանությանը, ֆիզիկային, երկրաչափությանը, աստղագիտությանը, ֆիզիկային վերաբերող գրքեր:

Հայկական տպագրության համար գործունեության երկրորդ՝ ոչ պակաս կարևոր ասպարեզը բացեց 18-րդ դարի վերջերից «Ազդարարով» իր կենսագրությունը սկսած հայկական մամուլը: Եվ արդեն 19-րդ դարի առաջին կեսին՝ գաղութահայ իրականության մեջ, գրատպության ու մամուլի միջոցով ձևավորվում է մարդկային իմացության հիմնական նվաճումները հայկական միջավայրին հաղորդող տպարանների, թերթերի ու ամսագրերի պատկառելի մի համակարգ:

³ Թեոդիկ, Ներածութիւն, «Տիպ ու Տառ. «գիր»-ին ծագման ու միջազգային ու հայկական տպագրութեան վրայ ձգուած ակնարկ մը», Կոստանդնուպօլիս, Յրատարակութիւն եւ Տպագրութիւն Վահրամայ եւ Յրաչի Տեր-Ներսէսեան, ՌՅԿԿ(1912), էջ 3:

⁴ Լեո, Հայկական տպագրութիւնը, Թիֆլիզ, Էլէքտրատպարան Ն. Սևանեանի, 1913, էջ 40:

Հենց դրան ենք մեծապես պարտական 19-րդ դարի կեսերից սկիզբ առած հայոց հոգեմտավոր վերածննդի և ազգային-քաղաքական զարթոնքի համար:

Ինքնաբերաբար կերպով ընթացող կրթական-լուսավորական և գիտահետազոտական աշխատանքները իրականացվում էին մի ազգի կողմից, որը ոչ միայն պետություն չուներ, այլև ենթարկվում էր դաժան խտրականության ու հալածանքների: Չնայած դրան, **Ճանիկ Արամյանի** և նրա մասն այլ նվիրյալների ջանքերով 19-րդ դարի հայ գրատպությունը ազատ Ֆրանսիայի մայրաքաղաքից ընթերցողին էր հասցնում ժամանակի լավագույն հայ մտածողների, գրողների ու բանաստեղծների խոսքը: Տպագիր գրքի և մամուլի միջոցով **Մ. Նալբանդյանի**, **Հ. Սվաճյանի**, **Մ. Մամուրյանի**, **Գրիգոր Արծրունու**, **Րաֆֆու** գաղափարները դառնում էին լայն հասարակայնության սեփականությունը:

Հատկանշական է, որ 19-րդ դարի վերջերից հայ ազգային-ազատագրական շարժման փշոտ ուղին բռնած երիտասարդներից շատերը սրտի խոր մորմոքով հրաժեշտ տվին իրենց այդ մեծ ուսուցիչների՝ մտածողների, գրողների, գիտնականների ու արվեստի մարդկանց գործը շարունակելու անկեղծ ձգտումներին, թեև դրա համար ունեին բոլոր անհրաժեշտ տվյալները:

Նրանց շարքում էին ինքնատիպ մտածող ու տաղանդավոր մանկավարժ **Քրիստափոր Միխայելյանը**, որն այդպես էլ միջոցներ չգտավ Մոսկվայում իր ուսուցչական շարունակելու համար, նշանավոր գյուղատնտես **Միմոն Ջավադյանը**, որն իր քաղաքական գործունեությանը զուգահեռ, այնուամենայնիվ, երբեմն հասցնում էր նաև գիտական աշխատություններ տպագրել՝ **Ջավարով** ազգանունով, և վերջապես՝ **Սեփան Ջորյանը (Ռոսոմ)**, որը մաթեմատիկայի, տեխնիկայի և ընդհանրապես՝ ճշգրիտ գիտությունների ասպարեզում դրսևորեց բացառիկ ունակություններ: Ռոստոմի սերը գիտելիքների և նրանց աղբյուր՝ տպագրության հանդեպ դրսևորվեց 1893 թվականին, երբ նա անսահման զրկանքներով ու չարչարանքներով պարկի մեջ լցրած **ՀՅԴ** պաշտոնաթերթի տպագրական պարագաները հասցրեց Ժնև՝ այստեղ դառնալով «**Դրոսակի**» խմբագիրը, գրաշարը, սրբագրիչը, այսինքն՝ **ՀՅ Դ** շարունակության առաջին տպագրիչը:

20-րդ դարի սկզբներին՝ հայ ազատամարտի բուռն վերելքի պայմաններում, իր տարածմամբ, թվաքանակով ու հարուստ բովանդակությամբ հայ իրականության մեջ գերիշխող դիրքեր գրավեց դաշնակցական մամուլը, որը մինչև Մեծ եղեռնը՝ Արևմտյան Հայաստանում և խորհրդային կարգերի հաստատումը՝ Անդրկովկասում, քանակական ու որակական բոլոր չափորոշիչներով առաջինն էր նաև ողջ տարածաշրջանում:

Բավական է նշել միայն այն փաստը, որ Օսմանյան ու Ռուսաստանյան կայսրություններում այդ տարիներին հրատարակվող **ՀՅԴ** կենտրոնական ու տեղական մարմինների թերթերի ընդհանուր քանակը 4 տասնյակից ավելին էր, իսկ **Կ. Պոլսի «Ազատամարտը»**, **Թիֆլիսի «Յառաջը»** և ապա՝ «անպաշտոն պաշտոնաթերթի» դեր ստանձնած «**Հորիզոնը»**, նկատելիորեն գերազանցել էին ժամանակի հայ մամուլի օրգաններին և՛ իրենց բովանդակության հարստությամբ, և՛ ընթերցողների թվաքանակով: Բանը հասավ նրան, որ ցարական ռուսականությունը 14 անգամ արգելեց «**Յառաջի**» տպագրությունը, բայց այն 1906-1909թթ. ընթացքում

14 անգամ վերահրատարակվեց՝ այլ անունների տակ, այլ խմբագիրների կողմից և իհարկե՝ տարբեր տպարաններում: ՀՅԴ Արևելյան Բյուրոյի «Յառաջ» պաշտոնաթերթի «Ալիֆ», «Երկիր», «Զանգ», «Ժամանակ», «Փայլակ», «Ժայռ», «Խաբիս», «Առո», «Կովկասի առափոս», «Նոր ալիֆ», «Վսակ», «Զանգակ» և «Գործ» անվանափոխումները Թիֆլիսում, ինչպես նաև ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի պաշտոնաթերթ «Ազասամարտի» «Առաջամարտ», «Բյուրանիա», «Ազդակ», «Բագին», «Մեղու», «Շանթ» և «Ճակասամարտ» անվանափոխումները Կ.Պոլսում դարձան մամուլի ու տպագրության ասպարեզում ՀՅԴ-ի դրսևորած անկոտրում կամքի ամենավառ վկայությունները:

20-րդ դարի սկզբներին հայ ժողովրդի կյանքում արձանագրվող հոգեմտավոր զարթոնքի արտահայտությունն էին 1912 թվականին հանդիսավորապես նշված՝ հայ գրերի գյուտի 1500 և հայկական տպագրության 400-ամյակի տոնակատարությունները: Աշխարհով մեկ սփռված հայկական համայնքները և բնաշխարհիկ հայությունը եկեղեցու, ազգային կուսակցությունների ու մտավորականության լավագույն ներկայացուցիչների համատեղ ջանքերով կազմակերպեցին այնպիսի շքեղ տոնակատարություններ, որ նրանց կարող էին նախանձել պետական կեցությամբ ապրող հզոր ազգերը: Տոնակատարություններն ընդգրկեցին ոչ միայն հայաշատ գաղթօջախները, այլև Արևելյան ու Արևմտյան Հայաստանի հեռավոր գավառները, ինչպես նաև հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչներին: Լույս տեսան բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ, մատենագիտական հրատարակումներ, հոդվածներ, որոնցում ամփոփվեց հայկական տպագրության անցած ուղին, մեծարվեցին նրա առաջին ռահվիրաները:

Գիրքը՝ որպես «...ժողովրդի հոգևոր-իմացական կարողությունների, նրա լավագույն հատկանիշների...»⁵ ցուցանիշ, և տպագրությունն ընդհանրապես, հայության վերածնունդի ամենավառ վկայություններից մեկն էին: Այդ վերածնունդը ծանր հարված ստացավ, բայց չէր կարող խաթարվել անգամ Մեծ եղեռնի արդյունքում, երբ փակվեցին ու թալանվեցին Օսմանյան կայսրության գրեթե ողջ տարածքում առկա հայկական տպարանները: Նույնիսկ գաղթականներով ու որբերով լցված և մարդկանց ֆիզիկական գոյությունը պահպանելու հոգսերով տարված Հայաստանի առաջին Հանրապետության մայրաքաղաք Երևանում 1918-1920թթ. չդադարեցին գրահրատարակչական աշխատանքները. գործում էին տպարաններ, հրատարակվում էին գրքեր ու թերթեր:

Երբ ամփոփում ենք 1512-ից մինչև 1920 թվականը հայ իրականության մեջ իրականացված տպագրական աշխատանքները՝ իրենց քանակական ցուցանիշներով ու աշխարհագրական ընդգրկմամբ, ակնհայտ է դառնում, որ այդ ընթացքում հրատարակված շուրջ 11 հազար անուն գրքերից ամենաշատը՝ 5492-ը, բաժին էր ընկնում արևմտահայերի հոգևոր ու մշակութային կենտրոն Կ. Պոլսին, իսկ ահա երկրորդ տեղում արևելահայ իրականության մեջ մույն դերը խաղացող Թիֆլիսն էր (3637), որը համեմատաբար կարճ ժամանակամիջոցում հասցրել էր առաջ անցնել հայ գրատպության առաջին օջախից՝ Վենեսիկից (2243):

⁵ Հայկ Դավթյան, Հայ գիրքը 1801-1850 թվականներին, մատենագիտություն, Եր., 1967, էջ 111:

Գրությունը հիմնովին փոխվեց Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման արդյունքում, և արդեն 1920-1940-ական թվականներին հայ գրքի տպագրության ասպարեզում առաջնությունն անցավ Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երևանին: Այդ տարիներին Խորհրդային Հայաստանում և ողջ աշխարհում լույս տեսավ մոտ 18 հազար անուն հայերեն գիրք, ինչը աննախադեպ էր քանակական առումով: Սակայն Խորհրդային Հայաստանում նկատելիորեն ընկավ հայ գրքի տպագրության որակը, իսկ մամուլը դարձավ մեկ կուսակցության խոսափողը: Մինչխորհրդային շրջանում ու արտերկրում տպագրված գիտական ու հրապարակախոսական գրականության և մամուլի նշանակալի մասը հայտնվեց գրադարանների այսպես կոչված՝ «հատուկ», որ նույնն է թե՛ փակ ֆոնդերում:

Այս ժամանակավոր իրողությունները, սակայն, չէին կարող կասեցնել ԽՍՀՄ գոյության վերջին շրջանում՝ 1960-1980-ական թվականներին, Հայաստանի հայտնության արձանագրած հոգեմտավոր վերելքը, որը նախապատրաստելու գործում հայ գրատպությունն ու մամուլը հսկայական դեր խաղացին: Այդ տարիների ընթացքում Խորհրդային Հայաստանի պետական ու մասնագիտացված հրատարակությունների կողմից իրականացված՝ անցյալի հայ դասականների և նոր սերնդի բանաստեղծների ու գրողների, պատմաբանների ու գրականագետների, փիլիսոփաների ու լեզվաբանների հիմնարար աշխատությունների տպագրությունը մեծապես նպաստեց Ղարաբաղյան շարժմանն ու նրան հաջորդած Հայաստանի երրորդ Հանրապետության ձևավորման գործընթացին: 1988-ին սկսված Ղարաբաղյան շարժումը թույլ տվեց նաև հայ գրատպության ու մամուլի լավագույն ավանդույթները վերականգնել Ադրբեջանի հայահալած քաղաքականության պատճառով իր գրագրությունը հիմնականում ռուսերենով իրականացնող Արցախի աշխարհի քաղաքներում ու գյուղերում⁶:

Հայաստանի անկախության վերականգնումը հայ տպագրության համար դարձավ մի կողմից՝ ազատության, իսկ մյուս կողմից՝ անտերության ու ամենաթողության սկիզբը: Տպագրական գործը նույնպես իր վրա կրեց շուկայական հարաբերություններին բնորոշ՝ պարզունակ առևտրականացման բացասական ազդեցությունը, սակայն համեմատաբար կարճ ժամանակամիջոցում Հայաստանում այս ոլորտը սկսեց ոտքի կանգնել առաջին հերթին հայ ժողովրդի՝ դեպի տպագիր գիրքն ունեցած մեծ հետաքրքրության պատճառով:

Այլ կերպ ընթացավ մամուլի զարգացումը Հայաստանի երրորդ Հանրապետությունում, որը սկզբնական շրջանում առաջընթացի նոր ազդակներ ձեռք բերեց արտերկրում գործող ավանդական կուսակցությունների մամուլի օրգանները Հայաստանում տպագրվելու արդյունքում: Սակայն այս գործընթացը խաթարվեց 1990-ականների կեսերից սկսված ժողովրդավարության նահանջի հետևանքով, որը հետագա տարիներին ավելի խորանալով՝ սահմանափակեց հայ մամուլի ազատ զարգացման հնարավորությունները:

⁶ Տողերիս հեղինակը, որն այդ օրերին դարձել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ապագա հիմնադիր Արթուր Մկրտչյանի կողմից Հաղորդի Պատմաերկրագիտական թանգարանի համար ձեռք բերված առաջին հայատառ գրամեքենայի Լեռնային Ղարաբաղ հասցնելու ողիսականի ակնմատեսը, չի կարող նմանություն չտեսնել խորհրդային արտադրության ծանր գրամեքենան պարկի մեջ թաքցնելով՝ Հաղորդ հասցրած Արթուր Մկրտչյանի և ժամանակին ՀՀ «Գրոշակ» պաշտոնաթերթի տառերը նույն կերպ ժնև տեղափոխած Ռոստոմի առաքելությունների միջև:

Այս ամենը տեղի էր ունենում վերջին տասնամյակներում արձանագրվող էլեկտրոնային հաղորդակցության միջոցների լայն տարածման պայմաններում: Համակարգիչն ու մանավանդ՝ համաշխարհային համացանցը՝ Ինտերնետը, պահպանելով ազգային գրատպության կողմից դարերով մշակված տառատեսակները, դյուրացրել են գիտելիքների ու տեղեկատվության ստացման հնարավորությունները: Առաջ է եկել սկզբունքորեն նոր երևույթ՝ մտածելը և համակարգչով գործառելը:

Գիտնականների կարծիքով՝ համակարգիչը նշանավորում է նոր տիպի քաղաքակրթության սկզբնավորումը, ինչը «...համեմատելի է գրի, գրքի, տպագրության հայտնագործությունների հետ կապված պատմամշակութային դարաշրջանների հետ, որոնցից յուրաքանչյուրին համապատասխանում է նաև մարդու մի որոշակի, ուրույն տիպ⁷»: Սակայն ամերիկացի փիլիսոփա Ջեյ Դեյվիդ Բոլթերի կողմից վերջինիս տրված «Տյուրինգի մարդ» բնորոշումը, որը կապված է անգլիացի գիտնական Ալան Տյուրինգի անվան հետ, ամենևին էլ չի վկայում, որ համակարգիչը նշանավորում է մարդկային մտածողության և գիտելիքների փոխանցման ավանդական ձևերի ամբողջական փոխարինումը նորով: Ավելի ճշգրիտ ու հավասարակշռված է այն տեսակետը, համաձայն որի՝ տեղի են ունենում դերաբաշխումներ գիտելիքների փոխանցման ավանդական ու նոր ձևերի միջև: Գիրքը և գիտական մամուլը այսօր էլ շարունակում են մնալ հասարակության ներսում հիմնարար գիտելիքների արմատավորման ամենավստահելի միջոցները, ուստի պատահական չէ, որ նրանց բովանդակությունը տեղափոխվում է էլեկտրոնային ՁԼՄ-ների էջերը: Այս գործընթացները գրատպության ու մամուլի հարուստ ավանդույթներ ունեցող ազգերից պահանջում են արագորեն հարմարվել նոր իրողություններին, սակայն չդառնալ նրանց գերին:

Նման մարտահրավերների առկայության պայմաններում է, որ Հայաստանն ու հայությունը կանգնում են Հայկական տպագրության 500-ամյակի տոնակատարությունների նախաշեմին: Դրանց մեկնարկը տրվել է դեռևս 2008թ. օգոստոսի 22-ին նախագահ Մերժ Սարգսյանի կողմից ստորագրված՝ «Հայկական տպագրության հիմնադրման 500-ամյակի միջոցառումների նախադասառաման նույնանունով ղեկավարող հանձնաժողովի ստեղծման մասին» կարգադրությամբ: Այնուհետև տեղի է ունեցել այդ հանձնաժողովի ձևավորման գործընթացը, կայացել են երկու նիստեր, մշակվել, սակայն դեռևս չի հաստատվել նրա ծրագիրը: Պատճառն այն է, որ այս ամենն իրականացվում է հին՝ խորհրդային բյուրոկրատիային բնորոշ «լավագույն ավանդույթների» ոգով, որը ցանկացած, նույնիսկ ամենանվիրական տարեթվի հետ կապված միջոցառումը սովորաբար վերածում էր անձնական ու խմբակային հարցերի լուծման միջոցի:

Ակնհայտ է, որ մնան պայմաններում մեր ազգային-մշակութային կյանքում կարևոր նշանակություն ունեցող Հայկական տպագրության 500-ամյակի տարեդարձը չի խաղալու իր դաստիարակչական ու քարոզչական դերը Հայաստանի, առավել ևս՝ Մփյուռքի մշակութային կյանքում:

⁷ Հանելտ Ա.Պետրոսյան, Փիլիսոփայություն. պատմություն. մշակույթ, Եր., ԳԳԱ «Գիտություն» իրատ., 2005, էջ 184:

Հայկական տպագրության 500-ամյակը ոչ թե պետությունը նրա գերատեսչությունների հետ նույնացնող բյուրոկրատիայի, այլ ողջ ազգի ու մանավանդ նրա մտածող մասի ինքնագնահատման ու ինքնադրսևորման հարմարագույն առիթն է: Իր լավագույն, նվիրյալ զավակների՝ Հայկական գրատպությունը և ապա մամուլը հիմնած հայ մտքի մշակների անսահման զրկանքների գնով, պետության բացակայության պայմաններում, ազգն է ստեղծել Հայկական տպագրությունը:

Ուստի ազգը պետք է տեր կանգնի իր մեծ, փառապանծ տոնին, որը վկայում է Հայկական տպագրության վաղ սկզբնավորման միջոցով Եվրոպայի, Առաջավոր Ասիայի և նախկին ԽՍՀՄ-ի գիտության, մշակույթի, կրթության և այլ ոլորտներում մեր ժողովրդի ունեցած ծանրակշիռ ներդրման մասին:

Խմբ.

TOWARDS THE 500-ANNIVERSARY OF THE ARMENIAN PRINTING (Editorial)

